# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 4-ի N 3/3.8-2/2683-10, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2010 թվականի մայիսի 4-ի N 1/06/928-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 6-ի N 13677/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից օժանդակության նպատակով Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված սպորտային հանդերձանքի (228 տեղ, 3747 կգ ընդհանուր քաշով, 244010 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2500 եվրո, «Արարատյան» ՏՍ) ներմուծման ծրագիրը:

2. Առաջարկել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մայիսի 2010 թվականի N Մ - 306 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-807-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-1/2559-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 29-ի N 12956/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2010 թվականի ընթացքում երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցություն» ծրագրի մասին» N Մ-807-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2009 թվականի մարտի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2009 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրություն և հաշվեքննություն՝ 720000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մայիսի 2010 թվականի N Մ - 305 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

**(«Հրայր և Աննա Հովնանյան» ֆաունդեյշն կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-1/2557-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 29-ի N 12958/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան» ֆաունդեյշն կորպորացիայի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված փոխանցման հաշվով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան» ֆաունդեյշն կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02560685) 2010 թվականի ապրիլի 16-ի N 16 փոխանցման հաշվով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է ծևավոր թիթեղի մատակարարում և տեղադրում՝ 1514160 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

14 մայիսի 2010 թվականի N Ս - 304 - Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Ս-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 2)**

(«Հրայր և Աննա Հովնանյան» փաունդեյշն կորպորացիայի մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-1/2785-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 7-ի N 13916/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան» փաունդեյշն կորպորացիայի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան» փաունդեյշն կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Ս-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մովարքստուդիո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00250371) 2010 թվականի ապրիլի 21-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էսքիզային և նախագծման աշխատանքների իրականացում՝ 18780000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**14 մայիսի 2010 թվականի N Ս - 303 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N Ս-455-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիայի Երևանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-1/1258-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 29-ի N 12954/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիայի Երևանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02536976) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 10-ի «Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիայի Երևանի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Ս-455-Ա որոշմամբ (2010 թվականի փետրվարի 2-ի N Ս-63-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2010 թվականի ապրիլի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինության ներքին հարդարման և կահավորման աշխատանքների իրականացում՝ 9921394 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2010 թվականի N Մ - 302 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N Մ-455-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիայի Երևանի մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-1/2788-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 7-ի N 13914/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիայի Երևանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02536976) կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 10-ի «Ամերիկայի հայկական համագումար» կորպորացիայի Երևանի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-455-Ա որոշմամբ (2010 թվականի փետրվարի 2-ի N Մ-63-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԿԱԳԵՎ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00437984) 2010 թվականի ապրիլի 23-ի N 04/002 փոխանցման հաշվով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է լամինացված մանրահատակի և շրիշակների մատակարարում ու տեղադրում՝ 1631250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գիպսոքրեյդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02238514) 2010 թվականի ապրիլի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գիպսաստվարաթղթային պատերի, միջնապատերի և առաստաղների ներկարարական աշխատանքների իրականացում՝ 4838000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2010 թվականի N Ս - 301 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N Ս-192-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սի Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-1/2562-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 29-ի N 12955/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Սի Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից կնքված ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի մարտի 28-ի «Սի Օ Էյ Էֆ» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների համապարփակ տնտեսական զարգացում» ծրագրի մասին» N Ս-192-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2010 թվականի մարտի 22-ին կնքված՝ N Intra/Constr 01-2010 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 625440 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2010 թվականի  N -300-Ա
քաղ. Երևան

## «ԲԱՐՁՈՒՆՔ 5165» ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷՋՄԻԱԾԻՆ 13» ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-1/2846-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի մայիսի 10-ի N 1029-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի մայիսի 12-ի N 12/8-22-3302, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի մայիսի 10-ի N ԱԱ/244-10, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2010 թվականի մայիսի 12-ի N ՊՆ/510 -ԱԴ-230 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 7-ի N 13910/3-4 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է .***

1. Բարեգործական որակել «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. էջմիածին, Արարատյան 13, ՀՎՀՀ՝ 02527787) իրականացվող՝ 45000 եվրո ընդհանուր արժողությամբ «էջմիածին 13»;ատամնաբուժական դիսպանսեր ծառայության մատուցում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական
հասարակական կազմակերպության
գլխավոր տնօրեն՝ Ա.Մելիքյանի կողմից

«30» 04 ......2010թ.

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## «ԷՋՄԻԱԾԻՆ 13» ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԱՐ-7/2

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | էջմիածնում և շրջանի 42 գյուղական համայնքներում ապրող անապահով ընտանիքներին անվճար ատամնաբուժական և լոգոպեդական օգնություն ստանալու ապահովում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով ՀՀ օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործները | Ծրագիրը ֆինանսավորվում է Ֆրանսիայում՝ Մարսելի «Bouches-du-Rhone» նահանգի Գլխավոր Խորհրդի, Ֆրանսիայում «Բարձունք 5165 » ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից |
| 4. | Ծրագրի կատարողը | «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպություն:<br>ՀՀ ք.էջմիածին, Արարատյան 13<br>հեռ: /0231/ 4-04-13,/ 0231/ 4-01-13<br>հվհհ - 02527787 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայրն է՝<br>ՀՀ Արմավիրի մարզ, ք. էջմիածին, Արարատյան 13<br>«էջմիաշին 13» ֆրանսիական ատամնաբուժական դիսպանսեր:<br>հեռ: /0231/ 4 04 13 ; / 0231/ 4 01 13<br>Ծրագիրն առնչվում է առողջապահական և սոցիալական բնագավառներին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն է՝ 45.000 եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Օգնությունից օգտվում են էջմիածին քաղաքում և շրջանի 42 գյուղական համայնքներում բնակվող<br>- Արցախյան ազատամարտի վետերանները և նրանց ընտանիքների անդամները<br>- զոհված և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների անդամները<br>- 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամները<br>- մանկուց հաշմանդամները<br>- Հայրենական պատերազմի վետերանները<br>- միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաները՝ /մինչև 21 տարեկան/<br>- անապահով ընտանիքները՝<br>որոնք գրանցվում են «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության «էջմիածին13» ատամնաբուժական դիսպանսերում՝ հիմք ընդունելով ՀՀ ՊՆ կողմից տրված զեղչերից ու արտոնություններից օգտվելու մասին տեղեկանք, Արմավիրի մարզի «Առողջապահության և սոցիալական |

| | | |
|---|---|---|
| | | վարչության» կողմից տրված տեղեկանքը: <br>-էջմիածին քաղաքի և շրջանի 42 գյուղական համայնքների դպրոցների դպրոցականները՝ մշտապես կազմակերպվող ակցիաների շրջանակներում: <br>Օգտվում են նաև <br>-Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան «Աստվածաբանական համալսարան»-ի սաները <br>- Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի հոգևորական և աշխարհական ծառայողները՝ հիմք ընդունելով Վեհարանի կողմից տրված տեղեկանքը: <br><br>Լոգոպեդի ծառայություններից օգտվում են էջմիածին քաղաքում և շրջանի 42 գյուղական համայնքներում բնակվող՝ լեզվական արատ ունեցող բոլոր երեխաները, որոնք դիմում են «էջմիաշին 13» ֆրանսիական ատամնաբուժական դիսպանսեր: <br>Ընդհանուր առմամբ տարեկան մոտ10.000 շահառուներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 2010թ. հունիսի 1-ից -2011թ. հունիսի 1-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում ՝ 2010թ. հունիսի 1-ից -2011թ. հունիսի 1-ը նախատեսվում է ծրագրի շահառուներին լիարժեք ապահովել թերապևտիկ ատամնաբուժական ծառայությունների և լոգոպեդական ծառայությունների մատուցում: <br>Ընդանուր առմամբ նախատեսվում է մոտ 12.000 հաճախումների ապահովում: |
| 10. | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծախսերը բաշխված են հետևյալ ուղղություններով՝ <br>-Ատամնաբուժական պարագաներ, սարքավորումներ, գործիքներ, պլոմբանյութեր, դեղորայք, այլ անհրաժեշտ բուժ.պարագաներ- 18.600 եվրո <br>-անձնակազմի աշխատավարձ և սոցիալական վճարներ 17.000 եվրո <br>- ճառագայթային անվտանգության և սանիտարական վերահսկողության ծախսեր – 450 եվրո <br>-տնտեսական և կոմունալ ծախսեր /էլեկտրաէներգիա, ջեռուցում, հեռախոսակապ, ինտերնետ, ջուր, աղբահանություն, շենքի պահպանություն /,գույք - 8.950 եվրո |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 8.950 եվրո-տնտեսական և կոմունալ ծախսեր, գույք որը կազմում է ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի 19.8% |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում համագործակցում է Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի Վեհարանի, ՀՀ Պաշտպանության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների, Արմավիրի մարզպետարանի, էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մե-խանիզմների նկարագրությունը | Կազմակերպության աշխատանքների վերահսկողությունը կատարվում է Մարսելի «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական կազմակերպության կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին յուրաքանչյուր եռամսյակ սահմանված կարգով կներկայացվի ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիս 2010 թվականի NՍ - 299 - Ա
քաղ. Երևան

## «ԲԱՐՁՈՒՆՔ 5165» ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ 13» ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ » ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-1/2826-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի մայիսի 10-ի N 1028-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի մայիսի 12-ի N 12/8-22-3304, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի մայիսի 10-ի N ԱԱ/246-10, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2010 թվականի մայիսի 12-ի N ՊՆ/510-ԱՊ-230 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 7-ի N13912/3-4, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Էջմիածին, Արարատյան 13, ՀՎՀՀ՝ 02527787) իրականացվող՝ 40000 եվրո ընդհանուր արժողությամբ «Գյումրի 13» ատամնաբուժական դիսպանսեր ծառայության մատուցում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

«Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության գլխավոր տնօրեն՝ Մերիթյանի կողմից

«30» 04 2010թ.

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## «ԳՅՈՒՄՐԻ 13» ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

21.7/3

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Գյումրիում ապրող անապահով ընտանիքներին անվճար ատամնաբուժական օգնություն ստանալու ապահովում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների ցուցակ ՀՀ օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործները | Ծրագիրը ֆինանսավորվում է Ֆրանսիայում՝ Մարսելի «Bouches-du-Rhone» նահագի Գլխավոր Խորհրդի, Ֆրանսիայում «Բարձունք 5165 » ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից |
| 4. | Ծրագրի կատարողը | «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպություն:<br>ՀՀ ք. Էջմիածին, Արարատյան 13<br>հեռ: /0231/ 40413, / 0231/ 40113<br>հվհհ - 02527787 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայրն է՝<br>ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի, Շիրակացի 201<br>«Գյումրի 13» ֆրանսիական ատամնաբուժական դիսպանսեր<br>հեռ: /0312/ 3 13 30 ; / 0312/ 5 13 65<br>Ծրագիրն առնչվում է առողջապահական և սոցիալական բնագավառներին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն է՝ 40.000 եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Օգնությունից օգտվում են Գյումրի քաղաքում բնակվող<br>- Արցախյան ազատամարտի վետերանները և նրանց ընտանիքների անդամները<br>- զոհված և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների անդամները<br>- 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամները<br>- մանկուց հաշմանդամները<br>- Հայրենական պատերազմի վետերանները<br>- միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաները՝ /մինչև 21 տարեկան/<br>- անապահով ընտանիքները՝ որոնք գրանցվում են «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության «Գյումրի 13» ատամնաբուժական դիսպանսերում՝ հիմք ընդունելով ՀՀ ՊՆ կողմից տրված զեղչերից ու արտոնություններից օգտվելու մասին տեղեկանք, Շիրակի մարզի «Առողջապահության և սոցիալական վարչության» կողմից տրված տեղեկանքը:<br>Ընդհանուր առմամբ տարեկան մոտ 8.000 շահառուներ: |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 2010թ. հունիսի 1-ից -2011թ. հունիսի 1-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում ՝ 2010թ. հունիսի 1-ից -2011թ. հունիսի 1-ը նախատեսվում է ծրագրի շահառուներին լիարժեք ապահովել թերապևտիկ ատամնաբուժական ծառայությունների մատուցում: Ընդանուր առմամբ նախատեսվում է մոտ 9.000 հաճախումների ապահովում: |
| 10. | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծախսերը բաշխված են հետևյալ ուղղություններով՝ Ատամնաբուժական պարագաներ, ատամնաբուժական սարքավորումներ, գործիքներ, պլոմբանյութեր, դեղորայք, այլ անհրաժեշտ բուժ.պարագաներ-17.700 եվրո:<br>-անձնակազմի աշխատավարձ և սոցիալական վճարներ 13.900 եվրո<br>- ճառագայթային անվտանգության և սանիտարական վերահսկողության ծախսեր – 450 եվրո<br>-տնտեսական և կոմունալ ծախսեր /էլեկտրաէներգիա, գազամատակարարում, հեռախոսակապ, ինտերնետ, ջուր, աղպահանություն շենքի պահպանություն/,գույք - 7.950 եվրո: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 7.950 եվրո-տնտեսական և կոմունալ ծախսեր, գույք որը կազմում է ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի 19.87% |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում համագործակցում է ՀՀ Պաշտպանության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների, Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մե-խանիզմների նկարագրությունը | Կազմակերպության աշխատանքների վերահսկողությունը կատարվում է Մարսելի «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական կազմակերպության կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին յուրաքանչյուր եռամսյակ սահմանված կարգով կներկայացվի ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տեղեկություն: |

Հր. 7/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 մայիսի 2010 թվականի NU 298-Ա
քաղ. Երևան

**«ԲԱՐՁՈՒՆՔ 5165» ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ 13» ՌԱԴԻՈԼՈԳԻԱՅԻ ԴԻԱԳՆՈՍՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-1/2827-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի մայիսի 10-ի N 1027, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի մայիսի 12-ի N 12/8-22-3301, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի մայիսի 10-ի N ԱԱ/245-10, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2010 թվականի մայիսի 12-ի N ՊՆ/510 -ԱՂ-230 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 7-ի N 13911/3-4, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Էջմիածին, Արարատյան 13, ՀՎՀՀ՝ 02527787) իրականացվող՝ 23000 եվրո ընդհանուր արժողությամբ «Գյումրի 13» ռադիոլոգիայի դիագնոստիկ ծառայության մատուցում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ Հր. 7/4

«Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության գլխավոր տնօրեն՝ ... Մելիքյանի կողմից

...2010թ.

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**«ԳՅՈՒՄՐԻ 13» ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏՈՄՈԳՐԱՖԻԱՅԻ ԴԻԱԳՆՈՍՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Շիրակի մարզում ապրող անապահով ընտանիքներին անվճար դիագնոստիկ / համակարգչային տոմոգրաֆիայի ճառագայթային - ախտորոշիչ/ օգնություն ստանալու ապահովում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում՝ օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով ՀՀ օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը /բարեգործները/ | Ծրագիրը ֆինանսավորվում է Ֆրանսիայում՝ Մարսելի «Bouches-du-Rhone» նահանգի Գլխավոր Խորհրդի, Ֆրանսիայում «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպություն:<br>ՀՀ ք. Էջմիածին Արարատյան 13<br>հեռ. /0231/ - 4 04 13 /0231/ - 4 01 13<br>հվհհ – 02527787 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը /վայրերը/, բնակավայրը | Ծրագրի իրականացման վայրն է՝<br>ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի, Շիրակացի 162,<br>հեռ: 0312 – 3 13 65:<br>Ծրագիրն առնչվում է առողջապահական և սոցիալական բնագավառներին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն է՝ 23.000 եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Օգնությունից օգտվելու են Շիրակի մարզի<br>-Արցախյան ազատամարտի վետերանները<br>-զոհված և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքները<br>-1-ին, 2-րդ խմբերի հաշմանդամները<br>-մանկուց հաշմանդամները<br>-հայրենական պատերազմի վետերանները<br>-միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաները<br>-անապահով ընտանիքները՝ /տարեկան մոտ 3.500 շահառուներ, / որոնք գրանցվելու են «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության «Գյումրի 13» ՀՏ դիագնոստիկ կենտրոնում՝ հիմք ընդունելով ՀՀ ՊՆ սոցիալական պաշտպանության վարչության կողմից տրված զեղչերից ու արտոնություններից օգտվելու մասին տեղեկանք, Շիրակի մարզի «Առողջապահության և սոցիալական վարչության» կողմից տրված տեղեկանքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Ծրագրի իրականացման տևողությունն է՝ 2010թ. հունիսի 1-ից -2011թ. հունիսի 1-ը: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում՝ 2010թ. հունիսի 1-ից -2011թ. հունիսի 1-ը նախատեսվում է ծրագրի շահառուներին ապահովել համակարգչային տոմոգրաֆիայի ծառայությային-ախտորոշիչ ծառայությունների մատուցում. Ընդհանուր առմամբ նախատեսվում է մոտ 3.500 հաճախումների ապահովում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծախսերը բաշխված են հետևյալ ուղղություններով՝<br>-Կոնտրաստների, ռենտգեն ժապավենների, , այլ անհրաժեշտ բուժական պարագաների ձեռք բերում- 12.700 եվրո<br>-անձնակազմի աշխատավարձ և սոցիալական վճարներ – 5.400 եվրո<br>-ծառայության անվտանգության և սանիտարական վերահսկողության ծախսեր – 400 եվրո<br>-տնտեսական և կոմունալ ծախսեր /էլեկտրաէներգիա հեռախոսակապ, ինտերնետ, ջուր, շենքի պահպանություն/,գույք - 4.500 եվրո |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 4.500 եվրո-տնտեսական և կոմունալ ծախսեր, որը կազմում է ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի 19.56 % |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում համագործակցում է ՀՀ Պաշտպանության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների, Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Կազմակերպության աշխատանքների վերահսկողությունը կատարվում է Սարսեի «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական կազմակերպության կողմից:<br>ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին յուրաքանչյուր եռամսյակ սահմանված կարգով կներկայացվի ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տեղեկություն: |

ՃՐ. 7/4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

14 մայիս 2010 թվականի NՍ 297-Ա
քաղ. Երևան

## «ԲԱՐՁՈՒՆՔ 5165» ՖՐԱՆՍԱՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ 13» ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 7-ի N 3/3.8-1/2828-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի մայիսի մայիսի 12-ի N 1053-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի մայիսի 12-ի N 12/8-22-3303, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի մայիսի 10-ի N ԱԱ/247-10, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2010 թվականի մայիսի 12-ի N ՊՆ/510 -ԱՂ-230, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 7-ի N 13909/3-4 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մայիսի 11-ի N 01/15/687 եզրակացությունները,*
***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Էջմիածին, Արարատյան 13, ՀՎՀՀ՝ 02527787) իրականացվող՝ 17000 եվրո ընդհանուր արժողությամբ «Վարդենիս 13» ատամնաբուժական դիսպանսեր ծառայության մատուցում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝                    Ձ. 7/5

«Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության գլխավոր տնօրեն՝ ............ Լ.Մելիքյանի կողմից
30. 04. ......2010թ.

# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## «ՎԱՐԴԵՆԻՍ 13» ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վարդենիսում և շրջանի 36 գյուղական համայնքներում ապրող անապահով ընտանիքներին անվճար ատամնաբուժական օգնություն ստանալու ապահովում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով ՀՀ օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործները | Ծրագիրը ֆինանսավորվում է Ֆրանսիայում՝ Մարսելի «Bouches- du-Rhone» նահանգի Գլխավոր Խորհրդի, Ֆրանսիայում «Բարձունք 5165 » ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից |
| 4. | Ծրագրի կատարողը | «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպություն: ՀՀ ք.Էջմիածին, Արարատյան 13 հեռ: /0231/ 4-04-13, / 0231/ 4-01-13 հվհհ - 02527787 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրի իրականացման վայրն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Վարդենիս,Կամոյի 1, «Վարդենիս 13» ատամնաբուժական դիսպանսեր Ծրագիրն առնչվում է առողջապահական և սոցիալական բնագավառներին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն է `17.000 եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Օգնությունից օգտվում են Վարդենիս քաղաքում և շրջանի 36 գյուղական համայնքներում բնակվող<br>- Արցախյան ազատամարտի վետերանները և նրանց ընտանիքների անդամները<br>- զոհված և անհայտ կորած ազատամարտիկների ընտանիքների անդամները<br>- 1-ին, 2-րդ, 3-րդ խմբերի հաշմանդամները<br>- մանկուց հաշմանդամները<br>- Հայրենական պատերազմի վետերանները<br>- միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաները՝ /մինչև 21 տարեկան/<br>- անապահով ընտանիքները՝ /տարեկան մոտ 3.500 շահառուներ,/ որոնք գրանցվում են «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական հասարակական կազմակերպության «Վարդենիս 13» ատամնաբուժական դիսպանսերում՝ հիմք ընդունելով ՀՀ ՊՆ կողմից տրված զեղչերից ու արտոնություններից օգտվելու մասին տեղեկանք, Գեղարքունիքի մարզի «Առողջապահության և սոցիալական վարչության» կողմից տրված տեղեկանքը: |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 2010թ. հունիսի 1-ից -2011թ. հունիսի 1-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում `2010թ. հունիսի 1-ից -2011թ. հունիսի 1-ը նախատեսվում է ծրագրի շահառուներին լիարժեք ապահովել թերապևտիկ ատամնաբուժական ծառայությունների մատուցում: Ընդանուր առմամբ նախատեսվում է մոտ 3.500 համախումբերի ապահովում: |
| 10. | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծախսերը բաշխված են հետևյալ ուղղություններով՝<br>- բուժական սարքավորումներ, դեղորայք, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, պլոմբանյութեր գործիքներ, պահեստամասեր այլ անհրաժեշտ բուժ.պարագաներ, -7.200 եվրո<br>-անձնակազմի աշխատավարձ և սոցիալական վճարներ 6.300 եվրո<br>- ծառայության անվտանգության և սանիտարական վերահսկողության ծախսեր -200 եվրո<br>-տնտեսական և կոմունալ ծախսեր /էլեկտրաէներգիա, գազամատակարարում, հեռախոսակապ, ինտերնետ, ջուր/ - 3.300 եվրո: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 3.300 եվրո-տնտեսական և կոմունալ ծախսեր, որը կազմում է ծրագրի համար նախատեսված ընդհանուր ծախսերի 19.4% |

| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման,տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում համագործակցում է ՀՀ Պաշտպանության, առողջապահության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների, Գեղարքունիքի մարզպետարանի, Վարդենիսի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մե-խանիզմների նկարագրությունը | Կազմակերպության աշխատանքների վերահսկողությունը կատարվում է Մարսելի «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական կազմակերպության կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին յուրաքանչյուր եռամսյակ սահմանված կարգով կներկայացվի ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տեղեկություն: |

ԺԲ. 7/5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մայիսի 2010 թվականի N Մ - 296 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 11-ի N 3/3.8-2/2937-10, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2010 թվականի մայիսի 12-ի N 1/06/952-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 12-ի N 14336/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ո ւ մ  է.*

1. Բարեգործական որակել Սիրողական բռնցքամարտի միջազգային ասոցիացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (88 տեղ, 770 կգ ընդհանուր քաշով, 3001.10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 385 ԱՄՆ-ի դոլար, 152 տեղ, 2585.51 կգ ընդհանուր քաշով, 13670 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1294.92 ԱՄՆ-ի դոլար, և 9 տեղ, 185 կգ ընդհանուր քաշով, 459 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարբոնգ» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Առաջարկել «Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը նշված բեռի համապատասխան ծնակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**14 մայիսի 2010 թվականի N Մ -295- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 11-ի N 3/3.8-2/2936-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 12-ի N 14335/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում երեխաների անվճար պատվաստման նպատակով ստացված ներարկիչների (9 տեղ, 130 կգ ընդհանուր քաշով, 922.11 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1600.86 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» US) ներմուծման ծրագիրը:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը նշված բեռը համապատասխան բուժհիմնարկներին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մայիսի 2010 թվականի N Մ - 234 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-862-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՈՐԱԿՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, համաձայն «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» N 66-Ն որոշմամբ հաստատված հանձնաժողովի կանոնադրության 2-րդ բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետի ու նույն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 23-րդ կետի,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Չեղյալ ճանաչել (կասեցնել) Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի «եկեղեցիների համաշխարհային խորհրդի Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամի կողմից 2010 թվականին իրականացվող «Նվերներ Հայաստանի երեխաներին» ծրագրի մասին» N Մ- 862-Ա որոշմամբ հաստատված ծրագրի բարեգործական որակումը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին, Հյաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մայիսի 2010 թվականի N Մ - 293-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N Մ-516-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի 2010 թվականի ապրիլի 26-ի N 097/10 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-1/2786-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 30-ի N 13136/3-6 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-516-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1904762 ԱՄՆ-ի դոլար» բառերը փոխարինել «678187200 ՀՀ դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» կազմակերպության
Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Ի. Սաղոյանի կողմից

......................................

26-ը ապրիլի 2010 թ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում դպրոցի վերակառուցման

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ստեփանակերտ քաղաքի Խ. Աբովյանի անվան թիվ 1 դպրոցի նոր մասնաշենքի կառուցում և կահավորում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Լինսի հիմնադրամ», The Lincy Foundation, 150 South Rodeo Drive, Suite 250, Beverly Hills, California 90212, USA |
| 4 | Ծրագրի կատարողը | «Սեյվ դը Չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության Հայաստանի մասնաճյուղ Հասցեն՝ Երևան, Ազաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ 01519077, |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը կիրականացվի Ստեփանակերտում: Կրթության ոլորտում կկատարվեն թիվ 1 դպրոցի նոր մասնաշենքի կառուցման և կահավորման աշխատանքներ: |
| 6 | Ծրագրի բյուջեն («Լինսի հիմնադրամ»-ի մասով) | 678,187,200 ՀՀ դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | (see below) |

| Մարզ | Համայնք | Կազմակերպություն | Հասցե | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն | Ստեփանակերտ | Խ. Աբովյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոց | Ստեփանակերտ, Կնունյանց 48 | Քաղաքապետարանի կրթության վարչությունը իրականացնում է կենտրոնացված հաշվապահություն |

| | | |
|---|---|---|
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2008 թվականի հունիսի 1-ից 2010 թվականի հունիսի 30-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | (see table below) |

| Եռամսյակ | Նախագծ. աշխատ. | Շին. աշխատ. | Կահույքի և պարագաների ձեռքբերում | Հենապատի կառուցման աշխատ. | Ընդամենը՝ ըստ եռամսյակի |
|---|---|---|---|---|---|
| II – 2008 | 3,900,000 | | | | 3,900,000 |
| III – 2008 | 12,800,000 | | | | 12,800,000 |
| IV – 2008 | | 213,924,100 | | | 60,746,000 |
| I – 2009 | | 95,348,000 | | | 51,122,000 |
| II – 2009 | | 101,604,500 | | | 51,122,000 |
| III – 2009 | | 39,123,400 | | | 51,122,000 |
| IV – 2009 | | 10,398,800 | | | 51,122,000 |
| I – 2010 | | 6,000,000 | 20,500,000 | 19,746,550 | 30,129,000 |
| II – 2010 | | | 27,412,700 | 19,746,550 | 51,122,000 |
| ընդամենը | 16,700,000 | 466,398,800 | 47,412,700 | 39,493,100 | 570,004,600 |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք բերվող ապրանքներ ու ծառայություններ – 570,004,600 դրամ որից՝<br>• Շինարարական նյութեր և ծառայություններ – 505,891,900 դրամ,<br>• 4x4 Jeep տիպի ավտոմեքենա – 11,387,800 դրամ (ձեռքբերում),<br>• Նախագծային աշխատանքներ – 16,700,000 դրամ,<br>• Կահույքի և պարագաների ձեռքբերում – 47,412,700 դրամ,<br>• հենապատի կառուցման աշխատանքներ – 39,493,100 դրամ,<br>• Սպասարկող աշխատակազմի աշխատավարձը – 78,312,300 դրամ,<br>• Օպերացիոն ծախսեր – 18,482,500 դրամ, |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր – 108,182,600 դրամ, որից՝<br>• Սպասարկող աշխատակազմի աշխատավարձը – 78,312,300 դրամ<br>• Օպերացիոն ծախսեր – 18,482,500 դրամ, ներառում է գրասենյակի վարձը, կոմունիկացիոն ծախսեր, տրանսպորտային ծախսեր, գրենական պիտույքներ և այլն<br>• 4x4 Jeep տիպի ավտոմեքենա – 11,387,800 դրամ (ձեռքբերում) |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում ՓԵ-ն համագործակցում է ԼՂՀ կառավարության, կրթության նախարարության և Ստեփանակերտի քաղաքապետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողությունը իրականացվում և «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» կազմակերպության և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան ծառայությունների կողմից և ընգրկում է հետևյալ գործողությունները.<br>• Շինարարական վերահսկողություն<br>• Ֆինանսական մոնիթորինգ<br>• Ադմինիստրատիվ վերահսկողություն<br>• Սահմանված կարգով հաշվետվություններ են ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**14 մայիսի 2010 թվականի N Մ -292-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-78-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Հայաստան» համահայկական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-1/2564-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 29-ի N12960/3-4 եզրակացությունները ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասկերան քաղաքի ջրամատակարարման համակարգի և կոյուղացանցերի վերակառուցման հեղինակային հսկողության օժանդակ» ծրագրի մասին» N Մ-78-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և կից ծրագրի 5-րդ կետերում «860000 դրամ» բառերը փոխարինել «1177000 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և կից ծրագրի 9-րդ կետում «860000 դրամ» բառերը փոխարինել «1177000 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մայիս 2010 թվականի N Մ-291-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-728-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Օքևան» երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-1/2560-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 29-ի N 12953/3-4 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Օքևան» երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Վաղարշ Վաղարշյան 12, ՀՎՀՀ՝ 00250922) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ գյուղի նախկին արդյունաբերական շենքի վերափոխում-վերակառուցում՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների համար» ծրագրի մասին» N Մ-728-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-863-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00005417) 2009 թվականի օգոստոսի 10-ին կնքված NN 34-2009 և 35-2009 պայմանագրերը, որոնցով նախատեսվում են Կոտայքի մարզի Քասախ գյուղի նախկին արդյունաբերական շենքի վերափոխում-վերակառուցում՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների համար կացարանի շինարարության հեղինակային հսկողության աշխատանքների իրականացում՝ 780000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում՝ 1210000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 մայիսի 2010 թվականի N Մ-230-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N Մ-129-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ) (2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի ապրիլի 29-ի N 3/3.8-1/ 2563-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի ապրիլի 29-ի N 12961/3-4 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշըն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի (ՀՀ, քաղ. Երևան, Ագաթանգեղոսի 2ա, ՀՎՀՀ՝ 01519077) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 5-ի «Միավորվենք հանուն երեխաների ապագայի» N Մ-129-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01519077) 2010 թվականի ապրիլի 16-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատծենահանող սարքի ծեռքբերում՝ 286000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Մ. ՏԵՐ[illegible]ՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**14 մայիսի 2010 թվականի N Մ-289-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագիր») (2)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի ապրիլի 27-ի N 53 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 10-ի N 3/3.8-2/2884-10-85 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 8-ի N 13960/3-6 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Հնդկաստանից ուղարկված բեռը (դեղեր՝ 12 տեղ, 108.3 կգ ընդհանուր քաշով, 9116.1 ԱՄՆ-ի դոլար արժեքով, տրանսպորտային ծախսերը կազմել են 1143.5 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հան-րապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մայիսի 2010 թվականի N Մ-288-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ-228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագիր») (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի ապրիլի 27-ի N 54 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 10-ի N 3/3.8-2/2885-10-86 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 8-ի N 13959/3-6 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Հնդկաստանից ուղարկված բեռը (դեղեր՝ 18 տեղ, 131.1 կգ ընդհանուր քաշով, 7009.10 ԱՄՆ-ի դոլար արժեքով, տրանսպորտային ծախսերը կազմել են 1473.6 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հան-րապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մայիսի 2010 թվականի N Մ - 287 - Ա**
**քաղ. Երևան**

# «ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ «ՏԱՐՈՆ - 3» ԹԱՂԱՄԱՍՈՒՄ 15 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի մայիսի 6-ի N 3/3.8-1/2790-10, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2010 թվականի մայիսի 6-ի N 01/13.2/1546-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի մայիսի 7-ի N 13917/3-4 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 73500000 դրամ ընդհանուր արժեքով «Վանաձորի «Տարոն - 3» թաղամասում 15 բնակարանի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «ԳՐԻՎԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04719504) 2010 թվականի ապրիլի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պենոպլաստերային սալիկապատված աղյուսների մատակարարում՝ 2500000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱՌԴԱ կոնստրակշն, թրեյդ ընդ թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2010 թվականի ապրիլի 20-ին կնքված՝ N Պ-20/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փրփրապլաստե աղյուսներով 15 բնակարանի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 30200000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Կոմֆորտ Ռ և Վ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00048483) 2010 թվականի ապրիլի 21-ին կնքված՝ N 5 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 3000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին և Վանաձորի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից
2010 թվականի մարտի 13 - ին

Գործադիր տնօրեն Հ. Ստեփանյան

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Վանաձորի «Տարոն - 3» թաղամասում 15 բնակարանի կառուցում»

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | Վանաձորում տնազուրկ բնակիչների համար փիփրապլաստե տեխնոլոգիաների կիրառմամբ 15 բնակարանի կառուցում: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում: |
| 3. Բարեգործը | ԱՄՆ-ի AGM շահույթ չհետապնդող կազմակերպություն՝ մեկ բնակարանի արժեքի 47,8 %-ի, կամ 2,342 մլն դրամի չափով, Վանաձորի քաղաքապետարան՝ մեկ բնակարանի արժեքի 27,2 %-ի, կամ 1,333 մլն դրամի չափով, «Ֆուլեր տնաշինական կենտրոն, Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն՝ մեկ բնակարանի արժեքի 25 %-ի, կամ 1,225 մլն դրամի չափով: |
| 4.Ծրագիրը կատարողը | «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ: Երևան, Պարույր Սևակ-9: ՀՎՀՀ՝ 00057312: |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր: Բնակարանաշինություն: |
| 6.Ծրագրի բյուջեն | 73,5 մլն դրամ (2010թ. 2-րդ եռ.- 25,3 մլն, 3-րդ եռ.-30,7 մլն, 4-րդ եռ.-10,2 մլն, 2011 թ. 2-րդ եռ.-7,3 մլն), որից հարկային և մաքսային արտոնություն է ակնկալվում 53,5 մլն դրամից: |
| 7. Բարեգործություն ստացողը | Վանաձորի տնազուրկ, ժամանակավոր տնակներում ապրող ընտանիքներ, որոնց ընտրությունը կատարվելու է Վանաձորի քաղաքապետարանի տրամադրած ցուցակների հիման վրա՝ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի և «Ֆուլեր տնաշինական կենտրոն, Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից համատեղ ստեղծված հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում: Բնակարանները շահառուներին հանձնվում են սեփականության իրավունքով: |
| 8. Ծրագի իրականացման տևողությունը | Մայիս 2010 թվական-մայիս 2011 թվական: |
| 9.Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Շինարարական-կառուցապատման աշխատանքներ՝ մայիս 2010 թվական-մայիս 2011 թվական: |
| 10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Շինարարական աշխատանքներ և շինարարական նյութերի ձեռքբերում (ներմուծում) - 73,5 մլն դրամ: |
| 11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: Վանաձորի քաղաքապետարան, որը այս նպատակով տրամադրել է երկրաշարժից հետո մնացած երկու միսակառույց շենքերի հիմքեր, ինչպես նաև իրականացնելու է արտաքին կոմունիկացիաները: |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ քաղաքաշինության նախարարություն (որակի վերահսկողություն), ՀՀ ԲԾՀՀ ներկայացվող հաշվետվությունների և «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների պարբերական այցելությունների միջոցով: |